Հաշվետվություն

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն

ՀՀ կառավարության 2016թ. սեպտեմբերի 29-ի N38 «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագրի և միջոցառումների ցանկի նախագծերին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման իրականացման վերաբերյալ

Հաշմանդամության ոլորտի պետական քաղաքականությունն ու նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը:

2017 թվականին շարունակվել են հաշմանդամության բնագավառի օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանացնելուն ուղղված աշխատանքները:

Լրամշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ներկայացվել է ՀՀ կառավարություն: Նախագիծը ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի N 694-Ա որոշմամբ հավանության է արժանացել և սահմանված կարգով ներկայացվել ՀՀ Ազգային ժողով:

Հետևողական աշխատանքներ են իրականացնում բժշկասոցիալական փորձաքննության համակարգում արմատական բարեփոխումներ կատարելու ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի փաթեթ, որպես հիմանական խնդիր դիտարկելով հիվանդություն ունեցող անձի կարիքների բազմակողմանի գնահատումն ու դրա արդյունքներով վերականգնողական բժշկական օգնությունը կազմակերպելը՝ կանխարգելելով հիվանդության ծանրացումն ու զարգացումը, հետևաբար նաև հաշմանդամության առաջացումը կամ խորացումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 114-Ա/1 հրամանի համաձայն, առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննության համար դիմած անձանց կարիքներն Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաներիմիջազգային դասակարգման սկզբունքներով գնահատելու և բազմակողմանի գնահատման արդյունքում վերականգնողական ծառայությունների կազմակերպման նպատակով՝ իրականացվել է փորձնական ծրագիր: Փորձնական ծրագրի շրջանակում անձի բժշկասոցիալական փորձաքննություն իրականացվել է ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների հիման վրա մշակված չափորոշիչներով: Շուրջ 193 անձ «Բժշկասոցիալական վերականգնման ծառայություններ»

պետական նպատակային ծրագրի շրջանակներում վերականգնողական անհատական ծրագրերի հիման վրա ստացել է վերականգնողական բուժօգնություն:

2017թ. իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլ վերականգնողական պարագաներ:

Լրամշակվել են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տեխնիկական բնութագրերը, դրանցում ներառվել են դրույթներ տրամադրվող պարագաների օգտագործման, պահպանման և անվտանգության կանոնների պարագաների որակի միջազգային կամ միջպետական ստանդարտների համապատասխանության վերաբերյալ:

Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշման՝ փոխվել է հաշմանդամի սայլակների և լսողական սարքերի տրամադրման ընթացակարգը, որի շրջանակներում անձը, պետական հավաստագրերի միջոցով, կարող է ձեռք բերել իր անհատական կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան հաշմանդամի սայլակ կամ լսողական սարք:

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Փրկություն», «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպություններին և «Աուտիզմ ազգային հիմնադրամին»՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար: